ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«12» հոկտեմբեր 2019թ. N 409-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼՈՒՍԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին կից հասարակական խորհուրդ ստեղծելու և աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 2061-Ա հրամանի 6-րդ կետը, և հաշվի առնելով, որ քաղաքացի Լուսինե Հարությունյանի (ք. Երևան, Աթոյան անցուղի 1-ին շենք, բն. 20) կողմից ներկայացված դիմումը համապատասխանում է նույն աշխատակարգի 4-րդ կետի պահանջներին, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 743-Լ որոշմամբ հաստատված ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Բավարարել ՀՀ ֆինանսների նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով Լուսինե Հարությունյանի կողմից 11.06.2019 թվականին ներկայացված դիմումը:

2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ հասցեատիրոջը իրազեկելուն հաջորդող օրվանից:

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ